Արձանագրություն թիվ 5

Նիստը գումարվել է 2023 թվականի հունվարի 5-ին: Նիստին մասնակցում էին մանկավարժական խորհրդի բոլոր անդամները:

Օրակարգում՝

1. Օրակարգի հաստատում, անդրադարձ նաախորդ նիստի կատարողականին / հաղորդող՝ տնօրեն Ա. Սարգսյան/

2. Ներառական կրթության ծրագրում ընդգրկված ԿԱՊԿ ունեցող սովորողների կազմի հաստատում, նրանց հետ կազմակերպվող աշխատանքների մասին / զեկուցող ՝ ՈՒԱԳ տեղակալ Ս. Բեգոյան/

3. Այլ հարցեր

1. Օրակարգի հաստատում, անդրադարձ նաախորդ նիստի կատարողականին / հաղորդող՝ տնօրեն Ա. Սարգսյան/

1.Լսեցին - Տնօրեն Ա. Սարգսյանը ներկայացրեց նիստի օրակարգը:

Արտահայտվեց ՈՒԱԳ տեղակալ՝ Ս. Բեգոյանը, նա նշեց, որ 1-ին կիսամյակում սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառներով չի ուսումնասիրվել թվով չորս առարկաների դրվածքի ուսումնասիրությունները, դրանց կիրականացվեն ըստ ժամանակացույցի 2-րդ կիսամյակում՝ <<Անգլերեն>>-փեետրվար, <<Ֆիզիկա >>-հունվար,<<Կենսաբանություն>>-հունվար,<<Երաժշտություն>>-մարտ ամիսներին:

Որոշեցին

Հաստատել 2023 թվականի հունվարի 5-ի օրակարգը և չկատարված աշխատանքները իրականացնել 2-րդ կիսամյակում:

2. Ներառական կրթության ծրագրում ընդգրկված ԿԱՊԿ ունեցող սովորողների կազմի հստատում, նրանց հետ կազմակերպվող աշխատանքների մասին/ զեկուցող ՝ ՈՒԱԳ տեղակալ Ս. Բեգոյան/

2. Լսեցին - ՈՒԱԳ տեղակալ Ս. Բեգոյանը ներկայացրեց, որ 2-րդ կիսամյակում դպրոցում սովորում է 20 ԿԱՊԿ ունեցող աշակերտ, որոնց հետ իրականացվում է շարունակական աշխատանք նախապես կազմված անհատական ուսուցման պլանով և ըստ աշակերտների կարիքներից ելնելով: Կազմակերպվում է նաև ԿԱՊԿ ունեցող աշակերտների հարմարեցումը դասարաններում: Կազմվել են հոգեբանամանկավարժական խմբի աշխատանքային կարգացուցակները:

Լսեցին- Տնօրեն Ա. Սարգսյանը հաղորդեց, որ հաստատվել է 2-րդ կիսամյակի հաստատությունում ԿԱՊԿ ունեցող սովորողների ցուցակը: Դրանք տրամադրվել են մ/մ նախագահներին:

Որոշեցին

Ընդունել ի գիտություն և ծանոթանալ ԿԱՊԿ ունեցող սովորողների փոփոխված ցուցակին:Աշխատանքները այդ սովորողների հետ իրականացնել ԱՈՒՊ–ներով՝ նրանց կարիքներից ելնելով:

Մ/խ նախագահ՝ / Ա. Սարգսյան/

Քարտուղար՝ / Ռ. Մարկոսյան/